


ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում է շեշտի գործածությունը՝ մասնավորապես կոչականի և հրամայական եղանակի բայաձևերի կետադրության առնչությամբ: Հրամայական եղանակի բայերի, ինչպես նաև կոչականի կիրառման դեպքերը տարակուսանք են առաջացնում՝ շեշտը լ, թե՛ ոչ: Հոդվածում փաստարկվում է, որ շեշտից խուսափելը մեծաթիվ դեպքերում ծուլության կամ կետադրական կանոնին չտիրապետելու նշան չէ, իսկ շեշտել-չշեշտելու միտումները ծանրութեթև անելը մասնավորապես լեզվաբանության բնագավառներից մեկի՝ գործաբանության կողմ է տանում:

Հոդվածը գրելու առիթ դարձած հարցերից է այն, թե 1930-ականներին Չարլզ Մորիսի ստեղծած և 1970-ականներին իբրև լեզվաբանության ճյուղ զարգացած գործաբանության հղացականացումը կարո՞ղ է այսօր Հայաստանում կրճատել դրա «պատմական հետավորությունը», որ նշանակում է նաև հայաստանյան լեզվաբանության կուտակած ավանդույթի վերահղացականացման, հաճախ նաև դրա դիմադրության հաղթահարման հանգեցնել: Այս հետնախորքի վրա է հողվածի հիմնական նպատակներից մեկը՝ կետադրության հարցերը, տվյալ դեպքում՝ շեշտի գործածությունը գործաբանական տեսանկյունից գնահատելը: Այդ նպատակին հետամուտ՝ հարց է տրվում՝ արդյո՞ք ժամանակը չէ՞, որ կիրառման հաճախականությունը, կիրառման գերակա միջավայրերը, միտումներն ու համատեքստերը փոփոխեն որոշ կանոններ:

Գործաբանությունից բացի՝ պարտադիր շեշտման կանոնները դիտարկվում են նաև լեզվաբանական այլ մակարդակների՝ ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության առնչությամբ:

* **Մարիամ Կարապետյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի դոցենտ

Мариам Карапетян – кандидат филологических наук, доцент кафедры новых медиа и коммуникаций ЕГУ

Mariam Karapetyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of New Media and Communications

Էլ. փոստ՝ mariamkarapetyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0003-4380-0294>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.03.2024

Գրախոսվել է՝ 07.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – հրամայական եղանակի բայաձևերի կետադրություն, կոչականի կետադրություն, շեշտի գործածություն, լեզու-խոսք հակադրություն, լեզվաբանական մակարդակների հարաբերություններ, շեշտի գործաբանական ներուժ

Այն, որ հայերենի կետադրական կանոնները հաճախ չեն պահպանվում նաև հայերենի կետադրությանը վերաբերող աշխատություններում, որ դրանց կիրառման խիստ հետևողականության և լիարժեք հիմնավորվածության գրեթե անհնար է հանդիպել, ակնհայտ է: Այս իրավիճակում անգամ պարզունակ թվացող տարակուսանք է հայտնվում. չի կարելի արդյոք կետադրությանն առնչվող հարցերին մոտենալ այլ կողմից՝ ոչ թե քերականական նորմի, այլ լեզվի կիրառության՝ խոսքի տրամաբանությունների: Այս հարցադրումն է, որ տանում է գործաբանության կողմ, որը, տարբեր տեսաբանների բնորոշմամբ, հետազոտում է լեզվի այն կողմերը, որոնք պահանջում են հղում լեզուն կիրառողներին, ավելի ամբողջական ընդգրկմամբ՝ խոսքի համատեքստին¹:

Վերը բերված պարզ հարցը, սակայն, բարդանում է առնվազն լեզվաբանական ավանդույթների միջնորդության բերումով:

Նախ՝ մի մեջբերում Լեզվի կոմիտեի կայքից. «Ըստ հայերենի կանոնների՝ շեշտվում են կրկնադիր շաղկապները, օրինակ՝ թե՛ ..., թե՛ ..., և՛ ..., և՛ ..., ո՛չ..., ո՛չ... և այլն: Եթերից հնչող խոսքում այս շաղկապները շեշտելու փոխարեն սխալմամբ շեշտում են դրանց հաջորդող բառերը՝ ասելով.

«Ոչ կրթակա՛ն, ոչ սոցիալակա՛ն, ոչ տնտեսակա՛ն երաշխիքներ չկան»: «Վիճակախաղին մասնակցում են բոլոր՝ և շահա՛ծ, և չշահա՛ծ տոմսերը»:

Ճիշտ են այս տարբերակները.

«Ո՛չ կրթական, ո՛չ սոցիալական, ո՛չ տնտեսական երաշխիքներ չկան»: «Վիճակախաղին մասնակցում են բոլոր՝ և՛ շահած, և՛ չշահած տոմսերը»²:

Լեզվի կոմիտեի այս պնդմանն առարկելու մղում է առաջանում միանգամից երկու ուղղությամբ. նախ՝ հակաճառել խոսակցական լեզվի հնչերանգը հեշտությամբ գրական լեզվի հնչերանգով պայմանավորելուն, ապա՝ հակաճառել՝ վիճարկելով ինքնին գրական լեզվի կետադրական կանոնը: Եվ այնուհետև՝ եթե կրկնադիր շաղկապների պարտադիր շեշտումը տարակուսելի է, քանի որ դրանց արտասանությանն այդպիսով ձայնի մշտապես և պարտադիր առանձնացող ուժգնություն է վերագրվում, ապա գուցե առավել տարակուսելի է կենդանի խոսքում հնչերանգային տարրերի շատ ավելի մեծ բազմազանությամբ հանդես եկող կոչականի և հրամայական եղանակի բայաձևերի պարտադիր շեշտումը:

¹ St' u **St. C. Levinson**, Pragmatics, Cambridge University Press, 1983, էջ 3-5:

² Հայերենի շեշտի մասին, <https://www.langcom.am/%d5%b0%d5%a1%d5%b5%d%a5%d6%80%d5%a5%d5%b6%d5%ab-%d5%b7%d5%a5%d5%b7%d5%bf%d5%ab%d5%b4%d5%a1%d5%bd%d5%ab%d5%bb6/> (01.04.23):

Միանգամից նկատենք, որ թեպետ լեզվաբանական գրականությունը հիմնականում պարտադիր շեշտման պահանջ է դնում, սակայն կան նաև այլ կարծիքներ: Օրինակ՝ Ս. Աբրահամյանի՝ հայերենի կետադրությունն ուսուցանող ձեռնարկը, ընդունված կանոնների համաձայն, կետադրության մասնավոր դեպքի քննարկումը սկսելով կետադրական նշանների դասակարգումից (տրոհության, բացահայտության և առոգանության)³, այդուհետև քննադատական դիրքորոշում է հայտնում. «Արդի հայերենի կետադրության թերություններից մեկը մի շարք դեպքերում ձևաբանական գործոնին առաջնություն տալն է շարահյուսականի, խոսքայինի համեմատությամբ: Այսպիսի դեպքերից է, օրինակ, հրամայական բայաձևի, կրկնադիր համադասական շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջը, որ մինչև այժմ էլ տեղ է գտնում որոշ գրքերում և կետադրության պրակտիկայում»⁴:

Կարելի է համաձայնել մտքի հիմնական միտումին (մասնավորապես շեշտի քննության լեզվաբանական մակարդակների վիճելիության հարցի արծարծմանը)՝ միևնույն ժամանակ հավելյալ ճշգրտման պահանջ ներմուծելով. ի՞նչ հարաբերություններ ունեն շարահյուսությունը և «խոսքային»-ը, և առհասարակ, լեզվաբանական կոնկրետ ի՞նչ հղացքների ու առնչությունների տեսակետից դիտարկել խոսքայինը: Հավելյալ և դեպի լեզվաբանության պատմություն ուղղվող հարցեր են՝ ինչպե՞ս են հայաստանյան լեզվաբանության մեջ ըմբռնվել կամ ըմբռնվում խոսքը և լեզվաբանության մակարդակները, մասնավորապես շարահյուսությունը, իմաստաբանությունը, գործաբանությունը: Անմիջապես չպատասխանելով այդ հարցերին՝ ընթանանք օրինակների վերլուծության ճանապարհով. դիտարկենք հայերենի շեշտի գործածության մեկնաբանության մի քանի այլ օրինակներ լեզվաբանական գրականությունից՝ քննարկելով մի շարք պնդումների տարակուսելի կողմերը:

Թեև հայ լեզվաբանները նշում են կետադրության՝ բանավոր խոսքի առոգանությունը փոխանցելու գործառնությունը (օրինակ՝ «[...]բանավոր խոսքի հնչերանգային նրբությունները արտահայտելու, մտքի միավորների՝ նախադասությունների և նրանց բաղադրիչների կապն ու փոխհարաբերությունները ցույց տալու նպատակով, գրության տարբեր ձևերի հետ, գործածվում են կետադրության նշաններ»⁵), սակայն այս սկզբունքը, թերևս, բավարար հետևողականությամբ չի զարգացվում: Մ. Դարբինյանն, օրինակ, իր «Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն» աշխատության մեջ (խմբագիր՝ Էդ. Աղայան, գրախոսներ՝ Հ. Բարսեղյան, Ռ. Իշխանյան), «Առոգանության նշաններ» վերնագրի տակ նկատում է. «Առոգանության նշանները դրվում են այն դեպքում, երբ բառը ձևաբանական և շարահյուսական հասկանիչներով ձեռք է բերում

³ Տե՛ս Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., Լույս, 1999, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 11:

⁵ Մ. Դարբինյան, Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., Լույս, 1990, էջ 3:

ցայտուն երանգ: Կան բառեր, որոնք ցայտուն երանգ են ձեռք բերում զուտ ձևաբանական հատկանիշներով. դրանք ձայնարկություններն են (մեծ մասը) և կոչականները, որոնք գրավոր խոսքում պարտադիր ստանում են առոգանության նշան, իսկ մյուս բառերը ցայտուն երանգ են ձեռք բերում շարահյուսական դերով՝ հեղինակի հայեցողությամբ: Ուստի այս վերջին բառերի հետ առոգանության նշան գործածելիս՝ (մեջբերվող պարբերության կետադրությունը մեջբերվող տեքստի հեղինակին է - Մ. Կ.) պետք է ելնել տվյալ խոսքի կառուցվածքից»⁶: Բացի նրանից, որ այստեղ վիճելի է ձևաբանության ու շարահյուսության շրջանակների ըմբռնումը (այն է՝ ո՞ր բաժնում դիտարկել կոչականը), իսկ հեղինակի հայեցողությունը շարահյուսական դերի հետ կապելը կասկածելի ուղիղությամբ է արվում (մինչդեռ այստեղ է, որ լեզվաբանական համապատասխան ավանդույթի առկայության դեպքում պետք է հայտնվեին իմաստաբանությունն ու գործաբանությունը), առանցքային է նաև այն հարցը, թե որտեղից այն վստահությունը, որ որոշ բառեր «ցայտուն երանգ են ձեռք բերում զուտ ձևաբանական հատկանիշներով»: Առավել ակնհայտ պատասխանն այս հարցին այն է, որ մոտեցումը հիմնվում է լեզվաբանության շրջանակների մասին ընդունված պատկերացման վրա, որը հստակ սահմաններ է դնում լեզվաբանականի և արտալեզվաբանականի միջև և հոգում միայն *քերականության դիրքից տեսանելի*ի մասին⁷:

Հիմնվելով ասվածի վրա՝ կարելի է հաջորդ պնդումն անել. քերականության դիրքից տեսանելի գլխավոր հասկացությունը, որի առնչությամբ կամ որի օգնությամբ լեզվաբանական գրականության մեջ դիտարկվում է շեշտը, հնչերանգն է: Շեշտը ծառայում է որպես միջոց՝ «գրաֆիկական տեսքի» բերելու, տեսանելի դարձնելու հնչերանգը: Եվ հաղթում է հնչերանգը գրավոր խոսքում պարտադիր նշույթավորելու պահանջը՝ անգամ հնչերանգի նրբությունների կոպիտ անտեսման գնով, քանի որ լեզվաբանության այս ընկալմամբ լեզվին արվող առաջնահերթ վերագրություններից մեկը, թերևս սխալված չենք լինի, այն է, որ *լեզուն քերականորեն վերլուծելի կառուցվածք է, և որքան տեսանելի լինեն կառուցվածքի տարրերը, այնքան լավ*: Այս տրամաբանության մեջ անբացահայտ ձևով հոդավորված է այն պատկերացումը, որ քերականական իմաստի հստակությունը, դրանով՝ հաճախ կաղապարացումը նպատակ է, որին պետք է ստորադասել զգայունությունը տարբերությունների նկատմամբ:

Այսպես՝ «*Հնչերանգի եղանակավորային գործառնության*» հարցի առնչությամբ անդրադառնալով խորհրդային լեզվաբանության մեջ «եղանակավորում» եզրույթի մեկնաբանություններին՝ Ս. Ղուկասյանը նկատում է, որ ընդհանուր առմամբ լեզվաբաններն առանձնացրել են եղանակավորման երկու տեսակ

⁶ Նույն տեղում, էջ 148:

⁷ Է. Աղայանի ձևակերպմամբ, օրինակ, քերականագիտական տեսանկյունից «ամեն մի վերլուծություն միայն քերականորեն դրսևորվող միավորի վերլուծություն է»: Է. Աղայան, Նախադասություն և ասություն, 1987, №1, էջ 129, http://www.old.yasu.am/files/10E_Aghayan.pdf (18.02.23):

օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ եղանակավորման հիմքում ընկած են այն իմաստները, որոնք գործում են անկախ հաղորդակցման գործընթացից, իսկ սուբյեկտիվ եղանակավորումը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով⁸: Հնչերանգի ամենակարևոր գործառույթներից մեկը համարելով նախադասությունների հաղորդակցական տիպերի տարբերակումը՝ լեզվաբանը նշում է նաև հնչերանգի «հուզատարբերակիչ գործառույթունը», որը, ըստ նրա, շեշտում են շատ հնչյունաբաններ: «Հուզա-զգացական գործառույթունը», ըստ Ս. Ղուկասյանի, որոշ դեպքերում նույնացվում է «նրա եղանակավորային գործառույթան հետ», իսկ ըստ մեկ այլ կարծիքի՝ «հնչերանգի հուզա-զգացական գործառույթունը լեզվաբանության ուսումնասիրության ոլորտից դուրս է», քանի որ դրա միջոցով արտահայտվում են «ոչ թե բուն լեզվական հարաբերություններ, այլ խոսողի վերաբերմունքը հաղորդման նկատմամբ» (էջ 176): Հնչերանգի «հուզատարբերակիչ գործառույթների» կարևորումը մի դեպքում հնչյունաբաններին վերապահելը, մեկ այլ դեպքում՝ առհասարակ լեզվաբանության սահմաններից դուրս թողնելը, ինչպես դժվար չէ տեսնելը, պարզապես հակադրվող առանձին կարծիքներ չեն, այլ մեկ ընդհանուր և հիմնարար պատկերացման դրսևորումներ, որոնց հետ կապված մեկ այլ դրսևորում է *հաղորդակցային մտադրությունների նրբությունների պակաս կարևորումը* մասնավորապես կետադրության հարցում:

Ասվածը հաստատվում է հաջորդ օրինակով ևս: Ըստ նույն լեզվաբանի՝ «կոչականը, որպես նախադասության կազմի մեջ մտնող միավոր, որը միաժամանակ խոսողի վերաբերմունքն է արտահայտում խոսակցի և խոսքի նկատմամբ, առաջին հերթին օժտված է առանձնահատուկ հնչերանգով: Բառը կոչական է դառնում հնչերանգի միջոցով: [...] Ըստ իրենց ռճախմաստային արտահայտչական բազմազանության ու շարադասության՝ կոչականներն ունեն հնչերանգային հարուստ նրբերանգներ. մի դեպքում դրանք արտաբերվում են ուժեղ, բարձրացող հնչերանգով, մի այլ դեպքում՝ մեղմ կամ թույլ: Կոչականի հնչերանգը պայմանավորված է նաև նախադասությունների հնչերանգային տեսակով, ինչպես նաև կոչականներ անվանող անձերի դիրքով, պաշտոնով, խոսակիցների մակարդակով, տրամադրությամբ, միջավայրով և այլն»⁹: Թվարկվող այս բոլոր տարբերությունները, սակայն, ամենևին չեն մտածվում կետադրության հարցի շրջանակում. «Կոչականի կետադրությունը բարդ չէ. այն տրոհվում է ստորակետով և իր վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է կրում, իսկ եթե կոչականն ունենում է նախադաս որոշիչ, շեշտն անցնում է այդ որոշիչ վրա»¹⁰: Իմաստային-ռճակական տարբերությունների թվարկման, իսկ կետադրության մեջ դրանց համահարթեցման նույն

⁸ Տե՛ս Ս. Վ. Ղուկասյան, Հնչերանգի որոշ ըմբռնումներ ժամանակակից լեզվաբանության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, №1 (97), էջ 176:

⁹ Ս. Դաբբինյան, նշվ. աշխ., էջ 193:

¹⁰ Նույն տեղում:

մոտեցումն է նաև հրամայական եղանակի բայաձևերի առնչությամբ¹¹ :

Առհասարակ լեզվաբանական մոտեցումների վերլուծության՝ ուշագրավ բացահայտումներ խոստացող ուղղություն է այն հարցի ուսումնասիրությունը, թե *ինչպես են հայ լեզվաբաններն արձարծում արտաբերականագիտական մակարդակների առկայության հարցը*: Այս հարցը բաղադրիչ հարց է հայաստանյան լեզվաբանության մեջ լեզվաբանական մակարդակների բնորոշման և դրանց հետ կետադրության խնդրի առնչման տեսածիրում: Ինչպես տեսանք նախորդիվ, նույնպիսի բաղադրիչ հարց է *կետադրության հարցում ձևաբանությունն ու շարահյուսությունը հակադրելու մոտեցումը՝ խոսքայինի հետ շարահյուսականի նույնացմամբ*:

Այսպես՝ պնդելով, որ հայերենում հնչերանգը չի կարող փոխարինել ստորոգմանը, Է. Աղայանն անդրադառնում է Գ. Ջահուկյանի այն տեսակետին, որ «ստորոգման համար հնարավոր» է նաև հնչերանգը՝ «որպես արտահայտության միջոց», և գրում է. «Բայց պետք է նկատի ունենալ, նախ՝ որ այդ հոդվածում նա քննության է առնում ստորոգումը ընդհանուր լեզվաբանական մոտեցումով, և երկրորդ՝ *ոչ թե մասնավորապես քերականագիտական, այլ ավելի լայն՝ խոսքի լեզվաբանության հայեցակետից, այսինքն լեզվաբանության այժմ բուռն զարգացում ապրող մի շատ ավելի լայն բնագավառի, որի մեջ միավորվում են թե՛ լեզվաբանական, թե՛ տրամաբանական և թե՛ հոգեբանական մոտեցումները*»¹² (ընդգծումն իմն է- Մ. Կ.):

Լեզվաբանական համակարգերի շրջանակների մատնանշման և լեզվաբանական այս կամ այն մոտեցման համատեքստայնացման այս օրինակը, անշուշտ, լայնախոհության օրինակ է, թեպետ նաև վիճարկելի է: Որպես ժամանակի լեզվաբանության զարգացումների հետ հարաբերվելու օրինակ՝ լեզվի ուսումնասիրման մակարդակների մասին Է. Աղայանի մոտեցումները¹³ սույն հոդվածի համատեքստում հիշատակելի են ոչ միայն իրենց որոշակի բովանդակությամբ, այլև *որպես լեզվաբանական ավանդույթի մի շեմ*, որտեղից ավելի հեշտ է անցում կատարել ավելի համարձակ հարցադրումների: Այնինչ, ինչպես այլ հետազոտողներ¹⁴ ևս նկատում են, հայ լեզվաբանության մեջ մշակված այն տեսությունները (Մ. Աբեղյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի), որոնց զարգացումը թույլ կտար արդի լեզվաբանության հետ համաքայլ զարգացնել հայոց լեզվի դիտարկման հայեցակետերը, էթե չեն անտեսվում, ապա մնում են միայն չքննարկվող հոդվածներում:

Այդուամենայնիվ, ինչ-որ կերպ կիրառվո՞ւմ են արդյոք արդի լեզվաբանության

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 74-77:

¹² Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 129:

¹³ Տե՛ս Ա. Մ. Աբրահամյան, Էդուարդ Աղայանի ներդրումը տեսական լեզվաբանության և նրա ուսուցման մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», №2, 2014, էջ 15-22, **նույնի՝** Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Եր., 2023, էջ 190-197:

¹⁴ Տե՛ս, օրինակ, Բ. Ներսիսյան, Մանուկ Աբեղյանը գրական արևելահայերենի քերականության տեսաբան, «Բանբեր Երևանի համալսարանի». Բանասիրություն, V. 3, 2024, էջ 67-78:

մտտեցումները հայ լեզվաբանների ուսումնասիրություններում այսօր:

Պարզ համացանցային որոնումն էլ բավական է պնդում անելու համար, որ, օրինակ, մեզ հետաքրքրող բնագավառը՝ գործաբանությունը, հայ հեղինակների կողմից ուշադրության է արժանանում հիմնականում տարբեր օտար լեզուների վերաբերող հետազոտություններում: Բայցևայնպես, հասկացությունը որոշ դեպքերում կիրառվում է նաև հայոց լեզվին անդրադարձող լեզվաբանական տեքստերում, ուստի ուսումնասիրության հաջորդ կանգառն այն հարցն է, թե ինչպես է այն մեկնաբանվում, և «լիագորությունների» ինչ ծավալ է դրան վերագրվում:

Մտորն ներկայացվող մեջբերումները գործաբանության վկայակոչման օրինակներից են:

Այսպես՝ Շ. Գևորգյանը նկատում է. «Մանուկ Աբեղյանը եղանակը բնութագրում է որպես «խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ»: *Այս սահմանման մեջ գիտակցվում է խոսողի դերը* (ընդգծումն իմն է - Մ. Կ.) և այն, որ խոսքը հարաբերության մասին է»¹⁵: Հետաքրքիր է, որ մետալեզվաբանական բնույթի այս նկատառմանը հաջորդող էջերում խոսողի դերը հեշտությամբ անտեսվում է: Կրկնենք մեկ անգամ էլ. ոչ թե հերքվում, այլ անտեսվում է: Հրամայական եղանակի կիրառությանը վերաբերող նույն հոդվածում մեջբերելով Գ. Ջահուկյանի դիտարկումը հրամայական եղանակի բազմիմաստության մասին (այն արտահայտում է գործողության կատարման հրաման, հորդոր, խնդրանք, թելադրանք, կոչ, ողջույն, զգուշացում, պատվեր, պատվիրան, պատգամ և այլն)¹⁶ Շուշանիկ Գևորգյանը հաջորդ էջում գրում է. «Յուրաքանչյուր նախադասության մեջ առկա է խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ: Հրամայական նախադասությունների հաղորդակցական գործառույթը *հրաման կամ կարգադրություն* (ընդգծումն իմն է-Մ. Կ.) արտահայտելն է»¹⁷: Նշանակությունների՝ բազմաթիվ լեզվաբանական տեքստերի բնորոշ այս սղումից բացի, առնվազն տարակուսելի է, որ այս բնութագրումներին հետևյալ պնդումն է հաջորդում. «Գործաբանական տեսանկյունից հրամայական կառույցները դրսևորում են տարաբնույթ իմաստներ՝ *սկսած ամենամեղմ քաղաքավարի խնդրանքից մինչև կտրուկ ու վճռական կարգադրություն* [...]»¹⁸ (ընդգծումն իմն է-Մ. Կ.): Պնդումների նման հաջորդականությունը նշանակում է, որ «հաղորդակցական գործառույթը» և «գործաբանական տեսանկյունը» կա՛մ հակադրվում են, կա՛մ դրանց նշանակություններն առնվազն մտածված չեն:

¹⁵ Շ. Գևորգյան, Հրամայական եղանակի կիրառությունը, «Կանթեղ: Գիտական հոդվածներ», գլխ. խմբ.՝ Ա. Սաստրյան, 2 (2016), էջ 43:

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 272: Մեջբերվում է ըստ Շ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 44:

¹⁷ Շ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 45:

¹⁸ Նույն տեղում, էջ 46:

Հնչերանգը, որը, ինչպես նկատեցինք վերևում, կետադրության հարցի դիտարկման առանցքային հասկացություններից է, նաև համարվում է ըստ *հաղորդակցման նպատակի* չորս տեսակի (պատմողական, հարցական, հրամայական և բացականչական) բաժանվող նախադասությունների հիմնական տարբերակիչը: Ըստ մեկնաբանություններից մեկի՝ այն «բոլոր պարագաներում պարտադիր քերականական հատկանիշ է այս նախադասությունները զանազանելու համար»¹⁹: *Հաղորդակցման նպատակն* իբրև նախադասությունների դասակարգման հիմք ընդունելը, սակայն, հայաստանյան լեզվաբանության մեջ միակ մոտեցումը չէ: Որպես նախադասությունների տվյալ դասակարգման հիմք՝ հաճախ նշվում է բնույթը: Ս. Աբրահամյանը, օրինակ, նկատում է, որ քանի որ «նախադասության տրամաբանական կողմի և վերջինիս ձևավորման լեզվական-քերականական միջոցների միջև միշտ չէ, որ գոյություն ունի ուղղագիծ համապատասխանություն»²⁰, ուստի ճիշտ է տվյալ դասակարգման հիմք համարել ոչ թե խոսողի նպատակը, այլ նախադասության բնույթը: Նա նաև հավելյալ փաստարկ է բերում. «Նախադասությունների տիպերը շարահյուսության ուսումնասիրման օբյեկտ պետք է լինեն ամենից առաջ իրենց կառուցվածքային, արտահայտության հատկանիշներով (այդպիսին է հենց նախադասության բնույթը) և ապա միայն տրամաբանական-նպատակային կողմով» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): Այստեղ գործ ունենք շարահյուսության՝ որպես լեզվաբանական կատեգորիայի լիագործությունների սահմանափակության գիտակցման հետ, և կարելի է տեսնել «հաղորդակցման նպատակ» եզրի ներառման համար համապատասխան լեզվաբանական մակարդակի բացակայության խնդիրը: Չնայած այդ խնդրի առկայությանը՝ շարահյուսությունն իբրև «հաշվարկման համատեքստ» գիտակցող այս պնդումը, թերևս, ավելի ճշգրիտ է իր տրամաբանական ընթացքի մեջ, քան այն մեկնաբանությունը, որը հաղորդակցման նպատակի բաժանարարը ներառում է փաստորեն իբրև շարահյուսական կատեգորիա՝ առանց բավարար չափով հղացականացնելու այս փոխառումը:

Սակայն այս տրամաբանությունն էլ սեփական տարակուսելի կողմերն ունի: Լեզվաբանը ստորոգյալի բնույթ ասելով նկատի ունի «բայաձևի եղանակային հատկանիշները և բաղադրյալ ստորոգյալի հանգույցի առանձնահատկությունն այդ նույն տեսակետից» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): «Պարզ ստորոգյալի բնույթը կարևոր նշանակություն ունի նախադասության բնույթի որոշման հարցում, քանի որ այն արտահայտվում է բայի եղանակային ձևերով,

¹⁹ Ս. Բաղդասյան, Պարզ նախադասության դրսևորումները հայերենի առանձնություն և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցական նպատակի, «Լեզու և խոսք -2»: Գիտական հոդվածների ժողովածու (Էլ. հրապարակում).– Եր., ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2020, էջ 3:

²⁰ Ս. Աբրահամյան, Նախադասության տեսակներն ըստ բնույթի ժամանակակից հայերենում, էջ 86, https://arar.sci.am/Content/196519/file_0.pdf (18.08.23): Այսուհետև սույն աշխատանքին հղում անելիս տեքստում կնշվի՝ Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», այնուհետև՝ էջը:

իսկ վերջիններին մեջ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): Բայի եղանակային ձևերի հետ նախադասության բնույթի համապատասխանությունը նախադասության բնույթի որոշման հարցում իբրև փաստարկ դիտարկելն առնվազն «կարճ միացման» տպավորություն է թողնում, թեկուզ հեղինակը նկատում է, որ այդ համապատասխանությունը զգալի է, բայց ոչ լրիվ (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 87): Խնդիրն այստեղ այն է, որ այս տրամաբանությունն անբացահայտ կերպով բայի եղանակային ձևերին առաջնայնություն է վերագրում խոսողի մտադրությունների, մոդալության նկատմամբ, մինչդեռ բայաձևերը *վերաբերմունքի արտահայտիչներ են և ոչ թե պայմանավորողներ*: Այսպես կարելի է հակաճառել բերված տեսակետին՝ դիմելով հենց հեղինակի մեկնաբանություններին և անգամ չանցնելով լեզվի կառուցաբանական ընկալման դիրքի: Ս. Աբրահամյանի մեկնաբանությունը, ինչպես նաև այլ լեզվաբանների նույնաբնույթ մեկնաբանությունները, այսպիսով, կարևոր է դիտարկել նաև դրանց բնորոշ մինչկառուցաբանական տրամաբանությամբ՝ բացահայտելու համար պակասող օղակները կամ այլ հանգամանքներ հենց այդ տրամաբանության մեջ:

Ըստ լեզվաբանի՝ բայի եղանակային ձևերի և նախադասությունների բնույթների միջև անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ առկա է նախադասության բնույթի ձևավորման ևս մեկ կարևոր գործոն՝ հնչերանգը (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 87): Հրամայական եղանակի անվանումը, սակայն, լեզվաբանը զգալի չափով պայմանական է համարում (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 106)՝ նշելով. «Հրամայական նախադասությունների շեշտը գրավոր խոսքի մեջ ոչ միշտ է անհրաժեշտ, և դա պայմանավորված է նախադասության երանգային նրբին հատկանիշներով» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 110):

Ուշագրավ է, որ խորհրդային տարիներին առկա այս որոշ վերապահությունը գրեթե անհետանում է հետխորհրդային Հայաստանում ստեղծված լեզվաբանական տեքստերում: Թե հնարավոր է արդյոք, որ դա կապ ունի անկախության տարիներին տեղի ունեցած կրթական փոփոխությունների հետ, ուսումնասիրելու արժանի իրողություն է: Գուցե այստեղ դեր ունի այն հանգամանքը, որ լեզվական կանոնները պիտի հնարավորինս սպառիչ լինեին՝ քննությունների թեսթային համակարգին համապատասխանելու համար, իսկ լեզվաբանական ուսումնասիրությունները հիմնականում անբաժան էին դասավանդման պրակտիկաներից. գրվում և տարածվում էին հիմնականում դասավանդման նպատակով: Այսպիսով՝ միանգամայն հնարավոր է, որ իմաստային նրբերանգների անտեսումները պայմանավորված լինեն նաև նշված գործոններով:

Այսպես. «Բայի եղանակի քերականական կարգը ցույց է տալիս գործողության և իրականության հարաբերությունը, ինչպես նաև գործողության կամ եղելության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը»²¹, - ասվում է բուհական դասավանդման համար նախատեսված գրքում: Սահմանումը, սակայն, չի լրացվում մեկնաբանություններով: Լեզվական սահմանումը ուսուցման պարզեցված տրամաբանության մեջ արագորեն վերածվում է կետադրական կանոնի՝ անմիջապես միտվելով դրա պարզ կիրառմանը. «Առողջության նշաններն են շեշտը, հարցականը, բացականչականը՝ (մեջբերման կետադրությունը մեջբերվող հեղինակին է - Մ. Կ.): Նրանցով նշվում են հնչման ելևէջները՝ համապատասխան վերաբերմունք, հաղորդակցային երանգ արտահայտելու համար»²²: Եվ եթե անգամ կանոնի մակարդակում որոշ փոքր վերապահում երբեմն լինում է (օրինակ՝ «Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, պատվեր, հորդոր, խնդրանք և արտասանվում են հատուկ հնչերանգով, որը գրավոր լեզվում *ստվորաբար* (ընդգծումն իմն է - Մ. Կ.) նշվում է շեշտով»²³), ապա կիրառության վերահսկվող ասպարեզներում (քննություններ, դպրոցական դասագրքերի տեքստերի և առաջադրանքների լեզու) հիմնականում դա էլ է անհետանում:

Կարող ենք, իհարկե, հարցեր չտալ կանոնների հաստատման այս խորքային պատճառների ու նուրբ ընթացքների մասին, սակայն դասագրքերի նշանակությունը լեզվի կանոնավորման գործում, միևնույն է, չենք կարող չտեսնել: Ինչպես նկատում է Չ. Աղաջանյանը. «Լեզվական ցանկացած օրինաչափություն, ցանկացած շեղում ու ցանկացած միտում կանոն է դառնում, եթե ներառվում է դպրոցական դասագրքերում. նորմատիվ քերականությունն ամենից առաջ դպրոցական դասագիրքն է: Բնականաբար հասկանալի է՝ հայագիտական տարբեր աղբյուրներում եղած կարծիքների՝ տեսակետների վերհանումից, լեզվաշինության ընդհանուր պատկերը ներկայացնելուց հետո դասագրքերի միջոցով անհրաժեշտ է պարզել, թե դրանք ինչ չափով են նպաստել մեր լեզվի նորմավորմանը [...]»²⁴:

Այսպիսով՝ մեզ հուզող հարցը քննարկելու ուղղություն է նախ հայաստանյան լեզվաբանության պատմությունն ու արդի վիճակը որպես դրա համատեքստ դիտարկելը: Թեև ԳԱԱ լեզվի ինստիտուտի կայքում խոսվում է հայ լեզվաբանների նշանակալից ավանդի մասին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են «լեզվի և մտածողության, տրամաբանական ու լեզվաբանական **կատեգորիաների** (ընդգծումը Լ. Ն.-ի), լեզվի և արտալեզվական իրականության

²¹ Լ. Եգեկյան, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 291:

²² Նույն տեղում, էջ 391:

²³ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն: Ուս. ձեռնարկ հայկ. բանասիր. ֆակ. համար, Եր., Երևանի համալս. հրատ., 2004, էջ 311:

²⁴ Չ. Աղաջանյան, Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում, Եր., Նաիրի, 2019, էջ 87:

փոխհարաբերությունը, լեզվական ու արտալեզվական աշխարհների ընկալման սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների դիալեկտիկան, աշխարհի լեզվական և հասկացական կադապարների ստեղծումը, լեզվական նշանի իմացաբանական հարցերը, լեզվական նշանի էության բացահայտումը, լեզվական գիտակցության և լեզվական հաղորդակցման հիմնախնդիրները, ընդհանրական լեզվաբանական կադապարի ստեղծումը և այլն»²⁵, սակայն հայերենին վերաբերող բազմաթիվ կարևոր, ավելին՝ գործնական նշանակություն ունեցող հարցեր դեռևս մնում են չմտածված կամ առնվազն չլուծված: Թեև տարբեր ձեռնարկներում կետադրության տեսական հիմքեր են նշվում, օրինակ՝ տրամաբանական-իմաստային, շարահյուսական և հնչերանգային հայեցակետերը²⁶, դրանց առնչությունները բավարար խորությամբ չեն մտածվում: Խնդիր է առնվազն այն, որ այդ կողմնորոշիչներն իրենք չեն բնութագրվում լեզվաբանական ավելի ընդգրկուն հղացքների տեսակետից, որոնք թույլ կտային առավել համակարգային և հիմնավոր վերլուծել կետադրության հարցերը:

Յու. Ավետիսյանը, օրինակ, անդրադարձ կատարելով հայաստանյան լեզվաբանության մեջ կետադրության զարգացման պատմությանը և փորձելով հղկել տարբեր ուսումնասիրություններում առաջադրվող մի շարք մոտեցումներ, ընդունում է, որ կետադրությունը պայմանավորող սկզբունքները երեքն են, ապա հավելում է. «Այդ պայմանավորվածությունը իրացվում է հետևյալ տարբերակներով՝

ա) ստորադասական հարաբերությամբ, որտեղ սովորաբար գերիշխող է դառնում տրամաբանական-իմաստային հիմունքը, բ) հավասարազոր իրավունքներով, որտեղ ակտիվանում է շարահյուսական հիմունքի դերը, և գ) առանձնաբար, որը գործնականում սահմանափակ դրսևորումներ ունի»²⁷:

Այս և նման այլ մոտեցումները, չնայած ճշգրտման, գործածության շրջանակների սահմանափակման ու հղկման, հետևաբար որոշակիացման փորձին, դեռևս կարիք ունեն ռացիոնալացման ավելի հետևողական ջանքի: Ռացիոնալացում, որը լեզվաբաններին թույլ կտա տեսական առավել ամուր դիրքերից պնդումներ անել և *հակասություններ*, *պակասություններ* կամ *բաց հարցեր* նկատել նաև հենց իրենց ստեղծած կամ նկարագրած համակարգերում: Ինչպես կարելի է պնդել լեզվաբանական գրականության մանրակրկիտ ընթերցման արդյունքում, չլուծվող խնդիրները, հակասություններն ու պակասությունները հաճախ են անտեսվում՝ չխանգարելով դյուրին եզրահանգումներ անելուն: Օրինակ՝ «Պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ և այլն), զեկուցում-

²⁵ Լ. **Հովսեփյան**, Լեզվաբանությունը Հայաստանում, <http://language.sci.am/hy/linguistics/lezvabanowtyowne-hayastanowm.html> (17.08.23):

²⁶ Տե՛ս, օրինակ, **Գ. Զահուկյան**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր», 1990, 7(75), **Վ. Ա. Մահակյան**, **Վ. Վ. Մահակյան**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Եր., 2010, **Յու. Ավետիսյան**, Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ, Եր., 2019:

²⁷ **Յու. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 24:

ներում և այլ կարգի փաստաթղթերում՝ դիմում-կոչականի կամ դրան նախորդող լրացման վրա կարելի է շեշտ չդնել՝ շարադրանքը ավելորդ նշաններով չծանրաբեռնելու համար» (Յու. Ավետիսյան, 169): Ինչպե՞ս է պատահում, որ պաշտոնական գրագրություններում կոչականի շեշտն ավելորդ նշան է դառնում, իսկ, օրինակ, սոցանցային գրառման մեջ, դասագրքում կամ այլուր՝ ոչ, չի բացատրվում: Ավելորդ չէ նշել նաև, որ նույն հեղինակը դեմ է արտահայտվում հրամայական եղանակի բայաձևերի պարտադիր շեշտմանը՝ նկատելով, որ «շեշտի գործածությունը և՛ տրամաբանական-իմաստային, և՛ հնչերանգային առումներով հաճախ բնավ էլ պարտադրական չէ» (Յու. Ավետիսյան, 41):

Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ կետադրական այս կամ այն կանոնը քննադատելիս լեզվաբանները, այդուամենայնիվ, չեն խիզախում մինչև վերջ զարգացնելու իրենց սկզբունքները՝ տեղի տալով լեզվաբանական ավանդույթների առաջ և բավարարվելով որոշ «կոսմետիկ» փոփոխություններով: Իսկ այդ ավանդույթները խախտելուց չվախեցող հարցը կարող էր հասնել ընդհուպ նրան, թե կարող է արդյոք գերազանցապես «շարահյուսական օրենքների և օրինաչափությունների վրա» (Յ. Ավետիսյան, 16) հենվող կետադրության քննադատությունը դիմել լեզվաբանական այլ բնագավառների՝ հարցերը մինչև վերջ սրելու, «ոսկե միջիններով» չգոհանալու և նոր մոտեցումներ օրինավորելու համար: Այդպիսի «սրված հարց» կարող է լինել, օրինակ, այն, թե ի՞նչ աստիճանի վերափոխություններ կունենանք հայերենի կետադրության մեջ, եթե շարահյուսական կողմնորոշիչը փոխարինենք կամ առնվազն ավելի վստահորեն լրացնենք *գործարանական կարողության* (pragmatic competence) կողմնորոշիչով: Այս և այլ հարցեր պետք է ուսումնասիրվեն առնվազն որպես տեսական քննարկման նյութ՝ քերականական իրողություններին ուղղված հայացքը թարմացնելու նպատակով:

МАРИАМ КАРАПЕТЯН - Использование армянского ударения. Лингвистические традиции Армении как контекст пунктуации. - В статье обсуждается использование ударения в письменном армянском языке, в частности, в отношении пунктуации глагольных форм повелительного наклонения, а также обращения. Практические примеры использования обращения и глаголов повелительного наклонения ставят вопрос относительно того ставить ударение или нет. В статье утверждается, что избегание ударения во многих случаях не является признаком лени или незнания грамматического правила, а необходимость понимания текущих примеров использования и тенденций направляют, в частности, в сторону одной из областей лингвистики - прагматики. Один из вопросов, лежащих в основе статьи, заключается в следующем: может ли концептуализация прагматики, созданной Чарльзом Моррисом в 1930-х годах и развившейся в качестве отрасли лингвистики в 1970-х годах, сократить «историческую дистанцию», то есть привести к переосмыслению накопленных традиций лингвистики в Армении. Соответственно, одной из основных целей статьи – ставить вопрос о прагматическом потенциале знаков препинания. Преследуя эту цель, ставится вопрос, не пора ли изменить правила постановки ударения?

Правила обязательного ударения также рассматриваются в отношении других лингвистических уровней, таких как морфология, синтаксис, семантика.

Ключевые слова: *противопоставление языка и речи, использование ударения, пунктуация повелительного наклонения, пунктуация обращения, взаимосвязь лингвистических уровней, прагматический потенциал ударения*

MARIAM KARAPETYAN – *The Use of the Armenian Stress. Linguistic Traditions of Armenia as a Context of Punctuation.* – The article discusses the use of stress in the written Armenian, in particular, with regard to punctuation of imperative verb forms, as well as vocatives. Practical examples of the use of vocatives and imperative verbs raise the question of whether to stress or not. The article argues that avoiding stress in many cases is not a sign of laziness or ignorance of a grammatical rule, and that the need to understand current usage examples and trends leads particularly in the direction of one of the fields of linguistics - pragmatics. One of the questions underlying the article is whether the conceptualization of pragmatics, created by Charles Morris in 1930s and developed as a branch of linguistics in the 1970s, can reduce the “historical distance”, that is, lead to a rethinking of the accumulated traditions of linguistics in Armenia. Accordingly, one of the main goals of the article is to raise the question of the pragmatic potential of punctuation marks. In pursuit of this goal, the question is raised, isn't it time to change the rules of stress?

The rules of obligatory stress are also considered in relation to other linguistic levels, such as morphology, syntax, semantics.

Key words: *the opposition of language and speech, the use of stress, punctuation of the imperative mood, punctuation of vocatives, the relationship of linguistic levels, the pragmatic potential of stress*